

ԺԶ.

ՄԱՄԱԹԻԱ

Օղի չխմողները գատուին... անոնք իրաւունք չունին այս թաղը մտնելու:

Բաժնուին մեզմէ նաեւ անոնք, որք սովորած են *ծառայ եմ*ի. հոս ամեն մարդ *տէր է*, վասնզի ամենքն ալ իրենց աշխատութեամբն եւ արհեստովը կապրին եւ, հետեւաբար, *պէյօ*երու, *էֆէնտիօ*ներու ոտները լզելու պարտաւոր չեն:

Մեզի հետ չգան նաեւ այն անձերն, որք արձակ հայիոյել գիտեն. անոնք հոս կ'ծաղրուին, վասնզի սամաթիացիներուն հայիոյութիւնն գրեթէ միշտ ոտանաւոր է:

Բնաւ հոս պտըտելու չեն այն օրիորդներն կամ տիկիներն, որոնց երեսներուն վրայ կարմիրը անպակաս է. սամաթիացին կարմիրն միշտ հաւկիթներու վրայ տեսնել կ'ուզէ:

Ամենեւին գործ չունին հոս այն կիներն, որք ամեն քայլափոխին կէս մէջքէն կկոտրըրտուին թղթեայ կիներուն պէս, զորս *հէյալը* կներկայացնէ. վասնզի սամաթիացին այնպիսիներու վրայ կիսնդայ:

Այս թաղին մօտենալու չեն նաեւ այն երիտասարդները, որք կամ շատ թեթեւ են եւ կամ շատ ծանր:

–Մարդ երթալու չէ ուրեմն հոս:

–Ինչո՞ւ. ամեն մարդ ստիպուա՞ծ է այդ թերութիւններն ունենալու: Եկո՛ւր քեզի հետ երթանք. բայց այնպիսի փողոցէ մը մտնենք, որ մէկէ մը չտեսնուինք. վասնզի տեսնուելուս պէս մեր օձիքէն կքաշեն ու գինետուն կտանին: Տեսնուեցանք... ահա քանի մը երիտասարդներ սա փողոցէն ելան եւ խնդալով մեզի կը մօտենան... մօտեցան:

–Օ՛ո՛ո՛, բարի էք եկեր:

–Շնորհակալ ենք:

–Եկէք նայինք, եկէք. Հայկական ընկերութիւնը երթանք եւ քանի մը հատ տնկենք:

–Հայկական ընկերութիւնը օղի խմելու համա՞ր հաստատուած ընկերութիւն մ'է:

–Նպատակն այն չէ... Բայց ո՞ր ընկերութիւնն է, որ նպատակին ծառայած ըլլայ: